


## ԱՇՈՏ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ (1937-1999) (Ստեղծագործական Դիմանկար)

ՆԱԶԵՆԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆ  
m\_ag@inbox.ru



Աշոտ Ասատուրեան

Տեսարան «Արա Գեղեցիկ Եւ  
Ծամիրամ» բալետից.

Ծամիրամ Ելվիրա  
Մնացականեան, Արա  
Գեղեցիկ՝ Յովհաննէս  
Դիմանեան



Աշոտ Ասատուրեանը, պատկանում է այն արուեստագիտների թուին, որոնց ստեղծագործութեան մասին ասում են՝ «այն ամէնքի համար չէ»։ Նա մահացաւ 1999 Մայիսին, Երեւանում, ընդամենը 62 տարեկան հասակում։ Իր 33ամեայ բալէտմայստէրական գործունէութեան ընթացքում նա ստեղծեց 22 բալէտ՝ Լենինգրադում (Մանկա-Պետերբուրգ), Սարատովում, Եկատերինբուրգում, Երեւանում, Գելիարինսկում, Խարկովում, Թբիլիսիում, Բաքուում։ Սա՝ չհաշուած այն բոլոր «դասական» կարգավիճակ ունեցող բալէտների վերաբեմագրութիւնները, չհաշուած այն բոլոր օպերային եւ դրամատիկ ներկայացումները, որոնցում նա շատ անդամ հանդէս եկաւ որպէս բեմադրութեան համահեղինակ։ Չհաշուած նաև բազում խորեոգրաֆիկ մանրանկարները։ Եւ տակաւին՝ բազմաթիւ բեմական մարմնաւորում չստացած իր հեղինակած բեմագրերը՝ «Ապուշը» (ըստ Ֆիոդոր Դոստովեսկու համանուն վէպի), «Ֆեղրա»ն (Ռասինի դրամայի հիմքով), «Կերպարանափոխութիւններ» (ըստ Մաքսիմ Գորկու «Աղջիկը Եւ Մահը» երկի), «Վազք» (ըստ Միխայիլ Բուլգակո-

վի դրամայի, որը մտայզուած էր իրականացնել կոմպոզիտոր Կոնստանտին Օրբելիանի համագործակցութեամբ), «Շուշի Սանան» (արեւելեան սիրավէպի հիմքով), «Սեւան»ը (Գրիգոր Եղիազարեանի երաժշտութեամբ), եւն.<sup>1</sup>

Ասատուրեանի կենսագրութիւնը երեւի թէ ամենայստակ ձեւով շարադրուած է իր վերջին՝ 1997ին Խարկովի Ռևոլյուցիական Օպերայի եւ Բալէտի թատրոնում բեմադրուած, Սերգէյ Ռախմանինովի «Սիմֆոնիկ Պարեր» բալէտի իր ծրագրում.-

«Հիանդու զգայունակութեամբ եւ բոցավառ երեւակայութեամբ, անյոյս սիրահարած երաժիշտը ճանապարհ է ընկնում փնտոելու իր երազանքը: Նրա զգացմունքները, յոյզերը, յիշողութիւնները մարմնատրում են երաժշտական մտքերի և կերպարների ծետվ: Բայց ահա, փշոտ ճանապարհին, անցնելով կրքերի խռովքի եւ հոգեկան տազնապի միջով, նա հանդիպում է իր Մուսային՝ իր Հայրենիքը, որը դառնում է նրա համար մեղեղի, սեւեռուն գաղափար, որը հետապնդում է նրան ամենուր: Նա ճանաչում է տրտմութիւն եւ բախիծ ողբերգական վայսի պարեղանակում: Ամենահարազատ մեղեղին մղձաւանջային ստուերներում է, նրա սիրտը ճգնում է, նրան տոգորում են մոայլ մտքեր՝ արդեօք հաւատարիմ է նա, ճիշտ է արդեօք իր ընտրած ուղին: Սարսափելի մենութեան մէջ նա լսում է մեղեղին Հայրենիքը սպասում է նրան: Կրկին վերադառնում է սեւեռուն գաղափարը՝ սիրոյ մասին վերջին մտքի կերպարանքով, որն ընդհատուել է ճակատագրական քայլով՝ նա լրել է Հայրենիքը:

Հերոսը տարօրինակ ամրոխի շրջապատում է գտնում, նրա ականջներում հնչում են տնրոցներ, ծցոցներ, ծիծաղի պայթիւններ, սակայն չի լսում մեղեղին. Ենրդաշնակութիւնը լրել է նրան: Խրախսանքը շարունակում է, լսում են քայլերզի հնչիւններ: Դա բաղնան զանգահարութիւն է: Հնչում է Dies irae<sup>2</sup>, Հայրենիքի գրկում նա շարունակում է իր փշոտ ճանապարհը»:

Բալէտում ընդգրկուած երաժշտութիւնը՝ «Սիմֆոնիկ Պարերը», Ռախմանինովի վերջին ստեղծագործութիւնն է: Սա նաեւ Աշու Ասատուրեանի բեմադրած վերջին բալէտն է:

«Սիմֆոնիկ պարերը,- նշում է Ասատուրեանը,- կոմպոզիտորի վերջին երկն է, գրուած 1940ին: Ըստ Էութեան, սա ինքնատիպ եռամաս սիմֆոնիա է, որի մէջ չկան պարեր պարզեցուած (մարուր) տեսքով եւ անուանումը չի համապատասխանում ստեղծագործութեան մէջ ներդրուած խոր բովանդակութեանը: Ես կ'անուանեի դա, երեւի թէ «Փիլիսոփայական պարեր», որովհետեւ երկում ներդրուած են փիլիսոփայական խնդիրներ եւ համամարդկային գաղափարներ: Ստեղծագործութեան մէջ ներդրուած են անհատական, ենթակայական մտութուններ: Կարելի է ենթադրել, որ սա պատմութիւն է Արտեստագէտի դառը ճակատագրի մասին, հայրենարադութեան եւ Արտեստագէտի մենակութեան մասին: Ինը հեղինակը սկզբնապէս ենթադրում էր տալ երկի մասերին ծրագրային անուանումներ՝ «Առաւու», «Կէ-

սօր», «Երեկոյ»: Սակայն խմբագրութեան վերջին պահին նա հրաժարուեց որևէ պարզաբանումներից, ըստ երեսոյթին չկամենալով ընդգծել յօրինուածրի ինքնակենսագրական բնոյքը:

Բայց ստայդուած է որպէս եռամաս պարային սիմֆոնիա Արուեստագէտի ճակատագրի, ստեղծագործական նկատումների ու հիասքափութիմների մասին: Սա զիսաւոր եերոսի խոստովանութիւնն է նրա հայրենարադութեան եւ հոգու ներդաշնակութեան կորստի մասին: Երկի երեք մասերը, համաձայն կոմպոզիտորի ստայդացման, կապուած չեն յաջորդական որոշակի բովանդակութեամբ: Դրանց միաւորում են Հերոսի ներքին երկխօսութիւնը, նրա յոյզերը, ապրումները: «Առաւոտ», «Կէսօր», «Երեկոյ» խորագրերը հնարաւոր է մեկնարանել նաեւ որպէս «Ծնունդ», «Սեղագործութիւն», «Համբարձում» եւ կամ՝ «Խնացութիւն», «Հիասքափութիւն» եւ «Մահ»: Բայց սիմֆոնիա «Առաւոտ» պատաստագէտի գոյացումը գեղեցկութեան և ներդաշնակութեան որոնումներում, աշխարհի արուեստագիտական ստապատկերի կազմատրումը: Պատահական չէ, որ կոմպոզիտորը անդրադառնում է Բերիովէնի տիտանական 9րդ սիմֆոնիային: Գլխաւոր թեման «Սիմֆոնիկ Պարեր»ում մերձենում է 9րդ սիմֆոնիայի զիսաւոր թեմային:

«Սիմֆոնիկ Պարեր»ը կոմպոզիտորի «կարապի» երգն է, այս ողբերգական սիմֆոնիան աւարտում է ոչ թէ «Գովերգ (Ներքոյ) ուրախութեամբ (թերկութեամբ)», այլ «Dies irae»ով: Այստեղ Ռախմանինովը մերձենում է Բերիովէնի սակայն եւ Բերլիոզը զլուս էր խոնարհում Սեծ Բերիովէնի առաջ»<sup>3</sup>:

Շարադրուած «Սիմֆոնիկ Պարեր» բալետի թեմագրի եւ Ռախմանինովի երկի վերլուծման ամէն տողի տակ, ինքը՝ Ասատուրեանը կարող է ստորագրել: «Սա իմ մասին է, իմ կնանքի պատմութիւնը»: Ուստի մենք էլ, Ասատուրեանի ստեղծագործական դիմանկարը շարադրելիս օգտառում ենք «Սիմֆոնիկ Պարեր»ի բաժինների վերնագրերից, դրանց աւելացնելով ենթավերնագրեր:

## ԱՌԱԻՕՏ ԹՐԻԼԻՍԻ

Աշոտ Ասատուրեանը ծնուել է 1937 Փետրուարի 20ին, Թրիլիսիի Հաւարար հայաբնակ արհեստաւորական թաղաժամասում, կօշկակար Անդրէյ Ասատուրեանի ընտանիքում: Այս փաստը կարծես կանխորոշում էր նրա ապագան, նամանաւանդ որ հայրը հաստատուն որոշում էր ընդունել, որ Աշոտը նոյնպէս պէտք է կօշկակար դառնայ: Որոշ չափով արուեստին կապուած էր նրա մայրը, որը տնային տնտեսուհի լինելով հանդերձ՝ չափազանց սիրում էր թատրոնը, որը գնում էր համերգերի, օժտուած էր դերասանական որոշ տուեալներով, շատ պատկերաւոր կերպով ցուցադրում էր Հաւարարի բակերում Հարեւանների միջեւ ծագող աղմկուա վիճարանութիւնները. նաեւ հեքիաթների դերասանօրէն միջեւ ծագող աղմկուա վիճարանութիւնները. նաեւ հեքիաթների դերասանօրէն պատմող էր: Բազմանդամ ընտանիքը (հայր, մայր եւ վեց երեխայ՝ չորս որդի, պատմող էր: Բազմանդամ ընտանիքը (հայր, մայր եւ վեց երեխայ՝ չորս որդի, պատմող էր: Աշոտը չորրորդն էր) ընակւում էր մէկ փոքր սենեակում: Արերկու դուստր, Աշոտը չորրորդն էր) ընակւում էր մէկ փոքր սենեակում: Արերկու դուստր, Աշոտը չորրորդն էր) ընակւում էր մէկ փոքր սենեակում: Արերկու դուստր, Աշոտը չորրորդն էր) ընակւում էր մէկ փոքր սենեակում:

որպէս բանուոր-կօշկակար՝ հացի փող վաստակելու։ Սակայն էլ աւելի վաղ շրջանից Ասատուրեանը առանձնանում էր ընտանիքի տեսանկիւնից «տարօրինակ», զարմանալի եւ ոչ-այդքան ցանկալի ունակութիւններով։ Նա պաշտում էր դասական երաժշտութիւնը, որն իր կուռքը մնաց ողջ կեանքի ընթացքում։ Հնարաւորութիւն եւ միջոցներ չունենալով յաճախելու երաժշտական դպրոց, նա ստուարաթղթի վրայ նկարեց դաշնամուրի ստեղնաշարը եւ «պարապումնուագում» էր դրա վրայ։ Շատ վաղ յայտնարերուեցին նաև նրա ունակութիւնները գեղանկարչութեան ասպարէզում։ Եւ վերջապէս, նա տոգորուած էր բալէտի արուեստով։ Ի վերջոյ, դէմ զնելով ընտանիքի, մանաւանդ հօր եւ մեծ եղրօր արգելքներին, Ասատուրեանը 12 տարեկան հասակում (որն արդէն, բալէտի օրէնքներով, մեծ տարիք է պարարուեստով լուրջ զբաղուելու համար) ընդունուեց Թբիլիսիի Պարարուեստի Ուսումնարանի փորձարական դասարանը։ Այստեղից սկսում է Ասատուրեանի վերընթաց ճանապարհը դէպի բալէտմայստէրի դժուարագոյն մասնագիտութիւնը։

### Թբիլիսի - Սանկտ-Պետերբուրգ

Աշոտ Ասատուրեանը ստացել է իր ժամանակի համար եւ Խորհրդային Միութեան պայմաններում բարձրակարգ եւ բարձրագոյն կրթութիւնը որպէս բալէտմայստէր։ Թբիլիսիի Պարարուեստի Ուսումնարանում սովորել է ընդհատումներով՝ 1962ի ամռանը աւարտելով Խորհրդային Միութեան ժողովրդական արտիստ, ականաւոր պարող եւ բալէտմայստէր Վախիթանդ Ճարուկիանի (1910-1992) դասարանը։ Մէջընդմէջ նա պարել է Թբիլիսիի Փալիաչովիլու Անուան Օպերայի եւ Բալէտի Ակադեմիական թատրոնում եւ Տաշքենդում՝ Նավոյիի Ուզբեկական Ակադեմիական Օպերայի եւ Բալէտի Մեծ թատրոնում։ Իսկ պարային գործնական փորձը շատ կարեւոր է բալէտմայստէրի համար։ 1962ին նա ընդունուեց Լենինզրադի Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի Անուան Կոնսերվատորիայի նորաբաց Բալէտմայստէրական թաժինը, որի կազմակերպիչն ու ղեկավարն էր ռուս ականաւոր բալէտմայստէր, նորաբար Ֆիոդոր Լոպուխովը (1886-1973)։ Ինչպէս նշում է իռա Բարուտչեւան.-

«Լոպուխովը հրաիրեց այնպիսի յարգուած պաշտօնակիցների, ինչպիսիք էին Նինա Ալեքսանդրովնա Անիսինովան, Իգոր Դմիտրիինիշ Բելսկին, Նատալիա Ալեքսանդրովնա Կամելովան<sup>4</sup>, նաև դասական ժառանգութեան գիտակներին։ Սկզբում նասնագիտութիւնը՝ բալէտմայստէրական վարպետութիւնը, վարում էր ինքը՝ Լոպուխովը։ Սակայն շուտով տասներկու հոգուց բաղկացած կուրսը նա բաժանեց երեք արուեստանոցների։ Իր արուեստանոցուն նա բոլեց ընտրեալ ամենասիրելի ուսանողներին՝ Աշոտ Ասատուրեանին, Նիկոլայ Մարգարեանցին<sup>5</sup>, Գևորգի Ալեքսանդրին<sup>6</sup> եւ Եֆիմ Խոնելինցկուն<sup>7</sup>։ Բոլորը վառ անհատականութիւններ էին։ Եւ բոլորից պրոֆեսորը ստեղծագործական հրաշքներ էր սպասում»<sup>8</sup>։

Դէմք է նշել, որ Լոպուխովի ստեղծագործական հաւատամքի ներքոյ ձեւաւորուել են ոչ միայն Խորհրդային Միութեան լաւագոյն բալէտմայստէրներ Եուրի Գրիգորովիչի (ծն. 1927)<sup>9</sup>, Վլադիմիր Վարկովիցկու<sup>10</sup> (1915-1974), Կոնս-

տանտին Բոյարսկու (1915-1974) խորեոգրաֆիկ ոճերը, այլև ամերիկեան հանճարեղ Զորջ Բալանչինի (1904-1983) սիմֆոնիկ պարի գաղափարը, քանի որ երիտասարդ Գէորգի Բալանչիւաձէն (Բալանչինի խկական անուն-ազգանունը) 1920ականներին Բեթհովէնի Չորրորդ Սիմֆոնիայի երաժշտութեամբ Լուպուխովի նորարարական «Պար-սիմֆոնիայի» ստեղծման անմիջական մասնակիցն է եղել:

Ի՞նչ է նշանակում լինել Լոպուխովի աշակերտը եւ ընդհանրապէս Լենինգրադի Կոնսերվատորիայի Բալէտմայտէրական Բաժնի առաջին շրջանաւարտներից մէկը՝ Ասատուրեանը, ի տարբերութիւն բազում բալէտմայտէրների, բեմադրում էր երաժշտական պարտիտուրով, այլ ոչ թէ լսողութեամբ (այսինքն, ընկալելով երաժշտութիւնը զուտ նուագակցող դաշնակահարի նուագից, ձայնասկաւառակից կամ էլ ձայներիզից): Ստեղծագործութեան դաշնամուրային տարբերակը հիանալիօրէն նուագում էր նոտաներից, գիտէր բեմադրուող ներկայացման երաժշտութեան գործիքաւորման բոլոր առանձնայատկութիւնները: Ուսումնասիրել էր երաժշտութեան տեսութեան բոլոր հիմնարար բաժինները՝ երաժշտութեան տարրական տեսութիւն, ներդաշնակութիւն, բազմաձայնութիւն, երաժշտական ձեւի վերլուծման հիմունքներ: Սա թոյլ էր տալիս նրան բացայայտել երաժշտութեան բոլոր ելեւէջները եւ դրանք արտայայտել պարարուեստի միջոցներով՝ կարծես «տեսանելի» դարձնելով երաժշտութիւնը: Սա ակնյայտ է դառնում Ասատուրեանի բեմադրութիւնների վերլուծման ընթացքում<sup>11</sup>: Նաեւ անհրաժեշտ է նշել կերպարուեստի խորը իմացութիւնը, որը, զուգորդուելով Ասատուրեանի գեղարուեստական ձիրքի հետ, թոյլ տուեց նրան ստեղծել իր բեմադրած մի շարք բալէտների՝ Արիֆ Մելիքովի (ծն. 1933) «Աւասպել Սիրոյ Մասին»՝ ըստ «Ֆարհադ եւ Շերին» սիրավէպի, Արամ Խաչատրեանի «Գայիհանէ», Սերգէյ Բալասանեանի (1902-1982) «Էլլի եւ Մեծնուն»՝ համանուն արեւելեան սիրավէպի հիմքով՝ բեմական զգեստների ուրուագծերը, որոնք մարմնաւորուեցին նշուած ներկայացումներում:

Գեղարուեստի եւ բեմական տարածքի ճիշտ պատկերացումը թոյլ էր տալիս Ասատուրեանին լուծել նաեւ ներկայացման լուսաւորման հարցերը, արտայայտչական ճիշտ շեշտադրումներ անելով եւ ստեղծելով «լուսային իմաստական յաջորդաշարք», ինչն ակնյայտօրէն դրսեւորուել է նրա բազմաթիւ ներկայացումներում: Ուսուցման տարիները Խորհրդային Միութեան ամենա առաջատար արուեստի կենտրոնում՝ Լենինգրադում, թոյլ տուեցին Ասատուրեանին դեռեւ 1960ականներին ծանօթանալ ոչ միայն առաջնակարգ ռուսական բալէտի լաւագոյն նմուշներին եւ կատարողներին, ներկայ լինել թէ՝ տեղական, թէ՝ արտասահմանեան նուագախմբերի համերգերին, ճանաչել ոչ միայն ռուս, այլև արեւմտաեւրոպական արդիապաշտ երաժշտութիւնը, այլև ծանօթանալ արեւմտեան «պարի դպրոց»ի եւ ի. դարի համաշխարհային բալէտի այժմէական, արդիական միտումներին<sup>12</sup>:

Ընկալելով դրանք՝ նա յետագայում իր բեմադրութիւնները իրականացնում էր՝ ելնելով այդ միտումների չափանիշների բարձունքից: Եւ թերեւս այդ էր պատճառը, որ նրա երկերը, նրա պարային «լեզուն» թէ՝ զարմացնում էին իրենց նորարարութեամբ, թէ՝ յաճախ հերքւում ու չէին ընդունւում, յաճախ էլ քննադատում էին Խորհրդային Միութիւնում լայն տարածում գտած 30ամանադատում էին Խորհրդային Միութիւնում լայն տարածում գտած 30ամանների եւ դեռեւ 60ականներին կենսունակ «գրամբալէտի»<sup>13</sup> ջատագովների կանոնների մասին արդիական միտումներին:

կողմից. Վերջապէս, զուտ անձնական հակումների շնորհիւ Ասատուրեանը դեռևս Լենինգրադում ճանաչեց ոչ միայն բարձրորակ գեղարուեստական գրականութիւնը, այլև հիմնովին ուսումնասիրեց փիլիսոփայական եւ աստուածաբանական գրականութիւնը։ Այդ մասին վկայում են նրա արխիտում պահպանուած լինինգրադեան գրադարաններում կարդացած գրականութեան իր կողմից կազմուած քարտարանը։ Ամէն հերթական բալէտային երկ ստեղծելիս, ինչպէս նաև բալէտային բեմագրեր գրելիս, նա հիմնովին ժանօթանում էր տուեալ երկի, դիպաշարի, երաժշտութեան հետ կապուած ոչ միայն փիլիսոփայական եւ աստուածաբանական (հարկ եղած դէպքում) գրականութեանը, այլև գրա հետ առնչուող գիտական՝ սկատմական, արուեստագիտական, երաժշտագիտական, բանասիրական գրականութեանը։ Դրա ապացոյցն են նրա անձնական արխիտում պահպանուած իր բեմագրութիւնների եւ բալէտային բեմագրերի պարզաբանագրերը։

Ի դէպէ, Ասատուրեանը այլ մարդկանց, նոյնիսկ մերձաւորների կողմից, ընկալուել է որպէս սակաւախօս մարդ։ Երբեք չի պատմել իր մտարդացումների մասին, տրամադրուած չի եղել, ինչպէս շատերը, երկար մեկնարանել իր երկերի ներիմաստր։ Աւելին։ Եթէ կարդանք պաշտօնականորէն հրապարակուած Ասատուրեանի բալէտների լիբրետոնները, իսկ այնուհետեւ համագրենք դրանք նրա բալէտների տեսագրութիւնների եւ անձնական տեսրերում գրառուած մտորումների հետ, ապա կը պարզուի, որ հրապարակուած լիբրետոն (որը կազմում էր բալէտմայստէրն ինքը) կարծես դիտաւորեալ կերպով թաքցնում է այն, ինչ բեմագրութեան մէջ ներդրել էր բալէտմայստէրը։

Աշոտ Ասատուրեանը բեմագրիչ էր, որը պարային լիգուով մարմնաւորում է շատ խորը մտքեր։ Նրա ներկայացումը դիտելուց յետոյ հանդիսատեսը չէր հեռանում «թեթեւ» եւ «գեղեցիկ» բալէտից զուարճացած, այլ՝ միշտ ընկնում էր մտօրումների գիրկը եւ երկար մտածում թէ՛ բարոյական, թէ՛ փիլիսոփայական հարցերի շուրջ։ Թերեւս այդ է պատճառը, որ, կրկնենք, Աշոտ Ասատուրեանի ստեղծագործութիւնը ամէնքի համար չէ։

Վերադառնանք Լենինգրադ։ Ռւաման տարիներին Ասատուրեանը մի շարք բեմագրութիւններ է իրականացրել Լենինգրադի Կոնսերվատորիայի Օպերային Ստուդիայի Բալէտային խմբում։ Նշուած խումբը 1961ին հիմնել եւ երկար տարիներ ղեկավարել է Ռուսաստանի վաստակաւոր արտիստուէի Նինա Ռուբէնի Միրիմանովան<sup>14</sup>, յատկապէս նկատի ունենալով, որ նոր բալէտմայստէրական բաժանմունքի ուսանողները պէտք է յատուկ բեմահարթակ եւ պարային խումբ ունենան իրենց ուսանողական ստեղծագործական փորձերը իրականացնելու համար։ Այս բեմահարթակում Ասատուրեանը բեմագրել է. 1963ին Ռախմանինովի «Պրելյուդ» (4 ռոպէ, համարը, տոնայնութիւնը նշուած չեն) եւ «Խաղաթղթերով Պար» Արամ Խաչատրեանի երաժշտութեամբ (որոշակի երաժշտական երկը նշուած չէ), 1964ին՝ Ռախմանինովի «Երկու Երաժշտական Ակնթարթ» (թիւը կամ տոնայնութիւնը նշուած չեն), 1965ին՝ Ռախմանինովի «Էտիւդ» (կրկին թիւը եւ տոնայնութիւնը նշուած չեն), Բորիս Պրորոկովի «Սա Զպէտք է Կրկնուի» գծանկաչական սերիայի մոտիւներով (այս երկը ներկայացնել է 1965ին Մոսկուայում)։ 1966ին՝ աշխատանք իգոր Ստրավինսկու «Օրֆէոս» բալէտի վրայ, 1967ին՝ 1) հատուածներ Ստրավինսկու «Փերիի Համբոյրը» բալէտից, 2)

Խորենդրաֆիկ յօրինուածք «Ֆաշիզմի Զոհերի Յիշատակին» Դմիարի Շոստակովիչի «Թիւ 8 Կուարտէտ»ի երաժշտութեամբ<sup>10</sup>:

1967ին Ասատուրեանն աւարտում է Լենինգրադի Կոնսերվատորիայի Բալետմայստէրական Բաժինը, որպէս դիպլոմային ներկայացում ցուցադրելով Մելիքովի «Առասպել Սիրոյ Մասին» ամբողջական, մեծածաւալ (3 դրծողութեամբ) բալէտը Սարատովի Նիկոլայ Չերնիչեևսկու Անուան Օպերայի Եւ Բալետի Թատրոնում՝ ստանալով «բալէտմայստէրի վարպետութիւն» առարկայի քննական «գերազանց» գնահատականը:

### ԿԷՍՈՐ Սարատով

1968ին Ասատուրեանը ստանձնում է Սարատովի Օպերայի Եւ Բալէտի Թատրոնի գլխաւոր բալէտմայստէրի պաշտօնը: Այստեղ նա աշխատեց մինչեւ 1973: Այդ ժամանակ նա բեմադրեց՝ 1968ին՝ արդէն յիշատակուած «Առասպել Սիրոյ Մասին» եւ Պիոտր Չայկովսկու «Մարդուկ-Չարդուկ» բալէտները, 1969ին՝ յարմարեցրեց դասական՝ Լիւդուիկոս Մինկուսի «Դոն Կիխոտ» բալէտը (Մարիինեան՝ Կիրովի Անուան Լենինգրադի Օպերայի Եւ Բալէտի Թատրոնի տարրերակը), 1971ին՝ ուսւա կոմպոզիտոր Էդուարդ Լազարեևի (ծն. 1935) «Անտոնիոս Եւ Կլէոպատրա» բալէտը, 1972ին՝ Խաչատրեանի «Գայիանէ»ն:

1971ին նա բեմադրեց Սուերդովսկի (այժմ Եկատերինորուրդ) Անատովի Հունաչարսկու Անուան Ակադեմիական Օպերայի Եւ Բալէտի Թատրոնում «Առասպել Սիրոյ Մասին» բալէտը, իրականացրեց մի շարք օպերաների պարային հատուածների բեմադրութիւնը, ինչպէս նաև մի շարք խորեոգրաֆիկ երկեր Սարատովի Պարարուեստի Ռուսումնարանի սաների համար: Հիւրախաղերի է տարել իսումբը Ռուսաստանի մի շարք քաղաքներ եւ արտասահման (Հիւսային Կորէա):

Տեղին ենք գտնում մէջրերել հատուածներ Ասատուրեանի հետ Սարատովում ստեղծագործական ժամանակաշրջանի գործակից Ռուսաստանի վաստակաւոր արտիստ Գենադի Ալբերտի (ծն. 1947) մեզ ուղարկած յուշերից<sup>11</sup>..

«Այնպէս ստացուեց, որ նս աշխատել եմ Աշոտ Անդրէյի Ասատորեանի հետ շորս քատերաշրջան՝ 1968-1972: Ցանկութիւն է առաջանում աւելացնել՝ ընդամենը շորս քատերաշրջան... Եթէ իմ կեանքում չիներ այս շորս քատերաշրջանը, ապա համոզուած եմ, պարարուեստի իմ ընկալումը ընդհանրապէս, իսկ դերասանի եւ բալէտմայստէրի գործունեութիւնը նաև առաջարկու կ'ընթանային հաւանարար այլ կերպ: Սարատով: 1968: Դենիշեևսկու Անուան Օպերայի Եւ Բալէտի Թատրոն: Բալէտային խմբի եւ նրա դեկազարի առաջին հանդիպումը: Պ. Չայկովսկու «Մարդուկ-Չարդուկ» ապագայ առաջնախաղի ներածութիւն, եւ բալէտմայստէր, որը նստած է դաշնամուրի առջեւ եւ բացատրում է դօ-մաժոր աղաջոյի տարբերութիւնը սոլ-մաժոր աղաջոյից: Եւ այնուհետեւ, կտրուկ անջատելով ծեռքերը դաշնամուրի ստեղնաշարից, բալէտմայստէրը կանգնեց իդէալական երկրորդ դիրքով եւ համարեա լրի տժով կատարեց grand-prie (բալէտային շարժում խորը նստել եւ բարձրանալ - Ն.Ս.), պարզաբնելով, որ այս

շարժման մեջ է պարփակուած երեխայի կողմից մեծահասակների աշխարհի ճանաչման ողջ իմաստը... Ներասանների և բալտմայութերի հանդիպման մասին աւելի բանաստեղծական պատմութիւն եւ այլեւս չեն լսել»:

**Ալբերտը նաեւ նշում է, որ Ասատուրեան բալէտմայստէրի համար սիմֆոնիկ պարը եղել է ալֆա եւ օմեգա: Խւրաքանչիւր դրուագ, որ բեմադրուած էր «զրամբալէտի» աւանդոյթներով, նրան կատաղեցնում էր:**

**Սարատովում աշխատելու տարիներին Ասատուրեանը դասաւանդել է նաեւ տեղի պարարուեստի ուսումնարանի աւարտական դասարանում: Աչա թէ ինչ է գրում նրա մասին նախկին աշակերտ, յետագայում Սարատովի թատրոնի մենակատար եւ 1996ից գլխաւոր բալէտմայստէր Վալերի Նեստերովը (ծն. 1954) իր յուշերում Ասատուրեանի մասին, որոնք շարադրուած են «ինքնատիպ, Վառ Տաղանդ» խորագրի ներքոյ:**

«Առաջին անգամ ես ծանօթացայ Աշու Անդրեյի Ասատուրեանի հետ 1969ին, երբ սովորում էի պարարուեստի ուսումնարանում... Նա մեզ դասաւանդում էր դասական պարի հիմունքները: Ասատուրեանը գերադասում էր պարապել դահլիճի մեջտեղում, քան վայսով մօտ, և միշտ ինքն էր ցոյց տալիս վարժութիւնների համակցութիւնը (այսինքն, ոչ-բառային բացարութիւններով - Ն.Ս.), ամենից շատ սիրում էր ցոյց տալ բոհշեներ: Խսկապէս, Ասատուրեանն օժտուած էր բարձր բոհշով և վարպետորեն օգտում էր դրանից: Նա իմ ամենասիրած դասաւանդողն էր: Գույտ այն պատճառով, որ յատուկ ջերմութիւն եւ հոգատարութիւն էր ցուցաբերում իմ հանդէպ: Երբ իմ բալետային կօշիկները մաշում էին, բերում էր բատրոնից նորերը և նուիրում ինձ... Ասատուրեանը միշտ աշխատում էր անձնուրաց եւ ի վիճակի էր վարակել եւ ներշնչել կատարողներին իր օրինակով: Սակայն եթէ տեսնում էր, որ դերասանը պարում է ոչ-լրի ուժով, չափազանց գրգուում էր եւ կարող էր վտարել փորձից: Ամենից շատ Ասատուրեանը սիրում էր աշխատել այն դերասանների հետ, որոնք օժտուած էին շարժումների գեղակերպութեամբ և դերասանական անհատականութեամբ: Դա դիրին է հասկանալ, քանի որ պարը նրա ներկայացումներում յագեցուած էր յուզական բովանդակութեամբ, այլ ոչ թէ ցուցադրում էր տեխնիկական հնարքները: Ասատուրեանը պահանջում էր դերասաններից, նոյնիսկ փորձի ընթացքում, երաժշտական, յուզական, իմաստաւորուած շարժում եւ բատերական արտայայտչականութիւն: Ասատուրեանը, ինչպէս ոչ ոք, զգում էր այս կամ այն կատարողի անհատականութիւնը և պարի ստեղծման ընթացքում միշտ դրանից էր ելնում»:

**Նեստերովի յուշերում նկարագրուած Ասատուրեանի աշխատանքային ոճը՝ դերասանի հետ, անչափ դիպուկ է: Համարեա նոյն կերպ են նրա մասին պատմել մեզ թէ՛ ոռւս, թէ՛ ուկրաինացի եւ թէ՛ հայ պարող-պարուհիները, որոնց հետ նա աշխատել է ինչպէս՝ Հայաստանի ժողովրդական արտիստ Յովհաննէս Դիւանեանը (ծն. 1952), հայ բալէտի մենապարուհի Ելենա Պաւլովին (ծն. 1953), Ռուսաստանի ժողովրդական արտիստ Իգոր Մտեցիւր-Մովան (ծն.**

1965), Ուկրաինայի Խարկովի Օպերայի Եւ Բալէտի մենակատար Օլգա Վասիլիանսկայան (ծն. 1954),

Նեստերովի յուշերում ցաւով կարդում ենք, որ 1960-70ականների սահմանագլխին Խորհրդային Միութեան մէջ իշխող գեղագիտական եւ գաղափարական չափանիշները ոչ մի կերպ չէին համընկում Ասատուրեանի գեղագիտական, ստեղծագործական, գաղափարական չափանիշների հետ: «Աշուտ Անդրեևիչը՝ զրում է Նեստերովը, - նոյն է արուեստում առավելապաշտ... Միշտ զգացում էր նրա լիովին անկախութիւնն որիշի կամքից: Ասատուրեանին ոչինչ հնարաւոր չէր «կապել», նեղմացնել նրան, որին փոխզիջման...» Նշուած հանգամանքները բերում էին անհասկացողութեան, յաճախ բախման՝ վերադաս մարմինների հետ... 1973ի սկզբին նա թողեց իր պաշտօնը Սարատովի թատրոնում եւ եկաւ Երեւան, իր հայրենիքը, եկաւ մեծ սպասումներով եւ պատրաստ իր ամբողջ կեանքը եւ ստեղծագործութիւնը նույիրել Հայաստանին, հայրենի պարարուեստին...

### Երեւան

Աշուտ Ասատուրեանին Երեւան հրաւիրեց այդ ժամանակ Սպենդիարեանի Անուան Օպերայի Եւ Բալէտի թատրոնի գլխաւոր բալէտմայստէր եւ երեւի թէ ամենաականաւոր հայ պարող Վիլէն Գալստեանը (ծն. 1941), որի համբաւը՝ որպէս կատարողի, գուրս է եկել Հայաստանի սահմաններից շատ հեռու: 1969ին Ասատուրեանը, դեռեւս լինելով Սարատովի թատրոնի գլխաւոր բալէտմայստէր, հրաւիրեց Գալստեանին հանդէս զալու Բաղիլի գլխաւոր դերում «Դոն Կիխոտ» բալէտում: Նրանք ընկերացան եւ վերջապէս, 1973ին Ասատուրեանը տեղափոխուեց Երեւան, որտեղ իրականացրեց իր առաջին բեմադրութիւնը Հայրենիքում՝ հանրաճանաչ կոմպոզիտոր Սերգէյ Բալասանեանի «Լէլի Եւ Մեջնուն»ը: Սպենդիարեանի Անուան թատրոնում աշխատելով 1973-90ին, Ասատուրեանը բեմադրեց ընդամէնը ութ բալէտային ներկայացում:

Ինչո՞ւ այդպէս պատահեց:

Արդարեւ, Սպենդիարեանի թատրոնում ծնուել են Ասատուրեանի հետեւալ բալէտային երկերը՝ 1973՝ Բալասանեանի «Լէլի Եւ Մեջնուն». 1975՝ Խորհրդային Միութեան ժողովրդական արտիստ Կոնստանտին Օրբելեանի (ծն. 1929) «Անմահութիւն» բալէտը, որը նոյն տարում արժանացաւ Համամիութենական Առաջին Մրցանակի Հայրենական Մեծ Պատերազմին նույիրուած բալէտային Երկերի Համամիութենական Ստուգատիանում: 1977ին՝ «Լոյսի Միմֆոնիա»ն, Էղուարդ Միրզոյեանի (ծն. 1921) «Միմֆոնիա Լիտաւրներով» գործի երաժշտութեամբ եւ Պարոյր Սեւակի «Մարգը Ափի Մէջ» բանաստեղծական շարքի ծրագրային հիմքով: 1980՝ Մորիս Ռաւելի «Դասինիս Եւ Քլոյան». 1982՝ Գրիգոր Եղիազարեանի (1908-1988) «Արա Գեղեցիկ Եւ Շամիրամ» բալէտը: 1983՝ «Թեմա Վարիացիաներով» (Զորջ Բալանչինի լիշտակին): Զայկովսկու Նուագախմբային Երրորդ Սուխտի Վերջարանի երաժշտութեամբ: 1985՝ «Հերոսական Բալլագ»ը Առնօ Բարախանեանի համանուն երկի երաժշտութեամբ: 1989՝ Մտրաւինսկու «Օրփէոս» բալէտը:

Աւա թէ ինչ է պատմում Հայաստանի ժողովրդական արտիստ նուագագար Եուրի Դաւթեանը (ծն. 1929) Հայաստանում Ասատուրեանի առաջին

«Էլլի Եւ Մեջնուն» բալէտի ստեղծման կապակցութեամբ: Նախապէս նշենք, որ բալէտը ստեղծուեց Դաւթեանի՝ որպէս նուադավարի և Ասատուրեանի՝ որպէս բալէտմայստէրի, համագործակցութեամբ:

Թատրոնը վաղուց եր ուզում բեմադրել Սերգեյ Բալասանեանի «Լեյլ Եւ Սնօսուն»ը: Առաջին խոկ հանդիպման պահից ինձ յուզեց Աշոտ Ասատուրեանի լաւագոյն պրոֆեսիոնալ պատրաստուածութիւնը: նա հոյակապ զգում էր երաժշտութիւնը, զիտէր ամէն մի տակտում ինչ է կատարում, եւ, ամենահետաքրքրիրը, նա բոլոր իմ նուագախմբային փորձերին, ո՞նց էր անում, զիտէն նատած էր, ու ամէն անգամ հետաքրքրում էր: «Եռորի Հայկովիչ, այ այս տակտում, որ այս գործիքները նուագեցին, մի՞րե այդպէս պէտք է հնչի, թէ՞ այդտեղ այլ կերպ պէտք է լինի»: Վերջացաւ նրանով, որ ես ասացի: «Աշոտ, կարո՞ղ է դու իմ գրաբննիշն ես»: Ծիծադեց եւ ասաց: «Չէ, պարզապէս ես լաւ զիտէն նուագրութիւնը և գործիքաւորման նրբութիւնները»: Եւ իրօր, նա հոյակապ կլատիր էր նուագում դաշնամուրով, բացի դրանից զայիս էր ինձ մօտ պարտիտորի բոլոր մանրամասնութիւնները բննարկելու: Այդ է պատճառը, որ նրան յաջողութ էր այդ ողջ կտրուածքով երաժշտութիւնը խորութեամբ վերլուծել, ճիշտ զզալ եւ դա արտայայտել պարային երանգներով: Զարմանում եմ, թէ ինչպէս էր ժամանակ գտնում 20 րոպէից կէս ժամ ինքը պարապել որպէս պարող: Մի անգամ հարցրեցի: «Աշոտ, այդ ինչո՞ւ ես անում»: Ասաց: «Եթէ ես ինքը շպարեն, այդ բոլոր շարժումները շկատարեն, ինչպէս եմ յետազայտմ դրանք շատ համոզի կերպով ցոյց տալու դերասանին»:

Հայատանի վաստակաւոր արտիստ, այժմ Սպենդիարեանի Թատրոնի գլխաւոր բալէտմայստէր Ռուգովի Խառաւեանը (ծն. 1947) այսպէս բնութագրեց Աշոտ Ասատուրեանին: «Այսօր, երբ ես խորացել եմ բալէտմայստերական գործի մեջ, տեսնում եմ, որ Ասատուրեանը միշտ պատրաստուած էր զայիս դակիճ փորձի և վնտուունների մէջ չէր գտնում, այսինքն՝ ժամանակ չէր տալիս, որպէսզի պարողը սկսի ծանծրանալ. անընդհատ նիւր էր տալիս, որ նարմնինը սկսի աշխատել: Ասատուրեանի հետ շատ հետաքրքրիր էր աշխատել, որովհետեւ ինքը տեսնում էր պարողի ոչ թէ այդ պահի արդինքը, այլ տեսնում էր նրա մէկ ամիս, մէկ տարի յետոյ առաւելագոյնի հասած արդինքը այսինքն, նա տեսնում էր դերասանի կարողութիւնը».

Մէջքերենք նաև մի հատուած Հայաստանի ժողովրդական արտիստ, Երեւանի Պարարուեստի Քոլէջի գեղարուեստական զեկավար Դիւանեանի յիշողութիւններից: «Նա միշտ պատրաստուած էր զայիս դակիճ, եւ ամենակարևորը՝ շատ երաժշտական էր, ինձ հազուադէպ է պատահել բալէտմայստէր, որը նոտա առ նոտա բոլոր շարժումները ցոյց տայ: Եթը նա ցոյց էր տալիս շարժումները, անձամբ, ինձ համար շատ պարզ էր, թէ նա ինչ է պահանջում թէ պարի եւ թէ կերպարի տեսակետից».

«Ամենակարեւորը, - ասում է 1970-80ականների մենապարուհի Պաւլիդին, - ոչ թէ շարժումն էր, այլ այդ շարժման յուզական ելեւէցի ըմբռնումը Ասատուրեանի հետ աշխատելիս: Ինչ վերաբերում է դերին, ապա կատարելով

Շամիրամի դերը՝ զգում էի մեծ հոգերանական ծանրաբեռնուածութիւն, այդ-  
քան խորն էր Ասատուրեանի նուայդացուած կերպարը»:

«Նա մի զարմանալի մքնողրու էր, կախարդական մքնողրու էր, որ  
ստեղծում էր Ասատուրեանը»՝ պատմում է Պարի Պետական Համոյթի առաջին  
նախկին մենակատարներից Մրբուհի Բարայիանը (ծն. 1951), որն աշխատել է  
Ասատուրեանի հետ «Դիէ Եսաման» պարային համարի վրայ:

Եւ այսպէս, գալով Հայաստան, Ասատուրեանը հանդիպեց իր Մուսային՝  
Հայրենիքին... Սակայն դա միակ մուսան չէր, որ պատահեց Հայաստանում  
Ասատուրեանին:

### Էրիքա Մնացականեան

Կարելի է պնդել, որ Հայաստանի ժողովրդական արտիստուհի էլլիրա  
Մնացականեանը (ծն. 1944), որն աշխատել է բազում բալէտմայստէրների հետ  
և 1966-1999 կատարել է առաջատար դերեր մօտ 40 ներկայացման մէջ, եթէ նոյ-  
նիսկ 1973ին չհանդիպէր Աշոտ Ասատուրեանին, այնուամենայնիւ, կ'աւարտէր  
իր բեմական ուղին որպէս Սպենդիարեանի Անուան Թատրոնի առաջին  
մենապարուհի... Սակայն հանդիպումը Ասատուրեանի հետ բախտորոշ էր: Նա  
դարձաւ բալէտմայստէրի թէ՛ կինը, թէ՛ մերձաւոր ընկերը, թէ՛ մուսան: Տասից  
աւելի բալէտ Ասատուրեանը բեմադրել է՝ նկատի ունենալով Մնացականեանի  
պարային եւ դերասանական ոճը, ստեղծելով նրա համար բազմապիսի եւ խորը  
կերպարներ՝ թէ՛ Լէլլի, թէ՛ Աղջիկ՝ «Անմահութիւնից», թէ՛ Քլոյա՝ «Դափնիս եւ  
Քլոյա» բալէտում, թէ՛ Էլրիդիկ՝ «Օրֆէոս» բալէտում եւ թէ՛ Շամիրամ՝  
«Արա Գեղեցիկ եւ Շամիրամ» բալէտում: Աշոտ Ասատուրեանը եւ էլլիրա  
Մնացականեանը միութիւն էր, որը որակում են «աւելին, քան սէրը»  
արտայարութեամբ: Էրիքա Մնացականեանը հետեւեց Ասատուրեանին  
Խարկով եւ 1997ին նրա հետ վերադարձաւ Հայաստան: Նա դադարեց պարել  
այն պահից, երբ մահացաւ նրա ամուսինը, ընկերը, բալէտմայստէրը՝ Աշոտ Ա-  
սատուրեանը:

### ԵՐԵԿՈՑ

#### Խարկով

Թերեւս երեկոն սկսուել էր դեռ Երեւանում, երբ հասկանալով, որ Հայրե-  
նիքը յանկարծ խորթ մօր կերպարանք է ստանում եւ թատրոնում առանձնա-  
պէս ոչ մի ցանկութիւն չունեն լայն ճանապարհներ բացել իր առջեւ, Ասա-  
տուրեանը 1990ին հեռացաւ Խարկով, որտեղ ստանձնեց Լիսենկոյի Անուան  
Ռեկրախնական Ակադեմիական Օպերայի Եւ Բալէտի թատրոնի գլխաւոր Բա-  
լէտմայստէրի պաշտօնը՝ Այդուհանդերձ Խարկովի «երեկոն» նոյնպես լի էր  
բազմակողմանի գործունէութեամբ: Ահա թէ ինչ է գրաւմ Խարկովի Ռեկրախ-  
նական թատրոնի գրական բաժնի վարիչ, բալէտի խորը մասնագէտ, արուես-  
տագիտութեան դոկտոր Ալեքսանդր Զեպալովը (ծն. 1953) Ասատուրեանի  
«Ռեկրախնական» ժամանակաշրջանի գործունէութեան մասին իր յուշերում՝<sup>11</sup> -

«Աշոտ Ասատուրեանը նկատ Խարկովի թատրոն բարդ պահին, երբ  
բալէտային խոմը փորձում էր յարնարուել՝ տեղափոխուելով ինը,

հնախարիսուլ շենքից նորը: Նոր շենքի առաջին բալետները դարձան Իզոր Ստրախնուկո «Օրփեոս»ը և «Հրեղէն Թոշուն»ը Աշոտ Ասատուրեանի թեմադրութեամբ: Մինչ այդ պահը Ստրախնուկո բալետները ընդհանրապէս ուկրախնական թեմում չեն թեմադրուել: Սա եղաւ նաև նորարարութիւն, առաջին դասը, որով Ասատուրեանը խրատի դաս տուեց խմբին: Ստանձնելով Խարկովի գլխաւոր բալետնայստերի պաշտօնը՝ Ասատուրեանը իր հետ քերեց Սանկտպետերութեան-Երոպական առանդույթները: Առաջինը՝ չեր հրաժարում ժմ՛. դարի դասական ժառանգութիւնից («Զնած Գեղեցկուիհին»)<sup>18</sup> վերականգնուեց Մարիխնեան քայլորնի խմբագրութեամբ, իսկ «Դոն Կիխոտ»ը նա թեմադրեց աւելի յենուելով Պետիպայի<sup>19</sup>, այլ ոչ Գորսկու<sup>20</sup> ոճի վրայ): Երկրորդը՝ Ասատուրեանը անվախօրեն ակադեմիկ խաղացանկ էր ներմուծում «նորդասականութիւնը»: «Օրփեոս»ի մասին Ա. Ասատուրեանն ասում էր, որ իր բալետի Վերջնական խմասն է ցոյց տալ Արուեստագէտի ներքին պայքարն իր հետ. որպէս երկատուածութեան խորհրդանիշ նա ընտրեց Սեւ հրեշտակին, ստեղծագործութեան խորհրդանիշ Երիդիկէին: Նմանապէս, Խարկովի բալետային խմբին եւ հանդիսատեսին անսովոր հնարքներից Ասատուրեանը օգտուում էր Չայկովսկու երաժշտութեամբ «Թեմա Վարիացիաներով» թեմադրութեան մէջ: Այդ բալետը նուիրեց Բալանչինի յիշատակին, ինչը խնդրեց յատուկ նշել բատերական ծրագրում: Ա. Ռախմանինովի «Սիմֆոնիկ Պարեր»ում նա նորից ներգրաւեց դրամատիկ «Եռանկեան մէջ» հիմնական հերոսներին՝ Արուեստագէտին, նրա Մուսային եւ ահարեկող Մահուան կերպարը: Ռախմանինովի հայրենաբանական երաժշտութիւնը, գրուած հայրենիքից հեռու, անշափ համապատասխանում էր այս խմբին: Այդ բախիծը զգացուում էր Արուեստագէտի նկուն ելեկցներում, որին լրում էր Մուսան, ասկայն ողջունում էր Հայրենիքը: «Դիպաշարը խորհրդանշական ընոյր էր կրում: Ասատուրեանը նտաւ ուկրախնական արուեստի պատմութեան մէջ Ալեքսանդր Կաներչուկինի<sup>21</sup> «Եւպրաքսիա» բալետի առաջին թեմադրութեամբ, որը կայացաւ 1994ին:

Խարկովում Ասատուրեանի թեմադրած նորդասական բալետներում յստակօրեն անց է կացուում այն միտքը, որ արուեստագէտը, որը ձգտում է բարձր արուեստի, յաճախ չի հասկացում մարդկանց կողմից, թերագնահատուում է եւ նոյնիսկ ժխտուում: Աւաղ, այդ բախումը Աշոտ Ասատուրեանը, ըստ երեւոյթին, կապում էր անմիջականօրեն իր ստեղծագործական ուղու հետ: Եւ, ըստ երեւոյթին, նա ճիշտ էր: Ասատուրեանի Խարկովում ստեղծագործական աշխատանքի փորձը ցոյց տուեց, որ ակադեմականութեան եւ նորարարութեան խելամիտ գուգորդուած իրաքանչիւր բալետային խմբի խաղացանկային բաղաբանութեան հիմքն է: Այս ճանապարհին նա ունեցել է եւ յաջողութիւններ, եւ վրիպուններ, սակայն հիմնականում նա չէր սխալում իրեն ուղեցոյց ընտրելով ստեղծագործական որոնումը, արժանի պետերուգեան բալետային դպրոցին»:

**Արուեստաբան Զեպալովի յուշերում, որոնք աւելի շատ պէտք է համարել վերլուծական յօդուած, տրուած է Աշոտ Ասատուրեանի վերջին տարիների**

ստեղծագործութեան ճիշտ մեկնաբանութիւնը։ Սակայն Զեպալովին, Հաւանաբար, ինչպէս եւ նրա հետ համագործակցող արուեստագէտներին մինչ օրս յայտնի չէր, թէ որքանով ինքնակենսագրական բնոյթ է կրում թէ՝ «Օրփէոս»ը եւ թէ՝ «Արմֆոնիկ Պարեր»ը Ասատուրեանի բեմական մեկնաբանութեամբ։ Արդէն 1990ից դեռ Երեւանում նրան հետապնդում է «Մահուան» կամ «Մեւ» հրեշտակը Արդէն ծանր հիւանդ լինելով 1980ից, ինչի մասին գիտէին միայն ամենամերժաւորները, նա մեկնեց Խարկով, որտեղ վիրաբուժական օգնութիւն ստանալուց յիսոյ մի քանի տարով երկարացրեց իր կեանքը։ Հիւանդութիւնը նորից սրուեց 1987ին, եւ արդէն «Արմֆոնիկ Պարեր»ը բեմադրում էին այն պահին, երբ նա, առողջական վիճակի վատթարացման պատճառով վաստօքէն ապրում էր թատրոնում եւ ոյժ չունէր նոյնիսկ թատրոնից տուն հասնել (Էլիթ-բա Մնացականեանի վկայութեամբ)։ Այդ է պատճառը, որ 1997ի վերջին Ասատուրեանը «շատ յանկարծակի ձեւով» (Խարկովի բալէտային խմբի կարծիքով) հրաժարուեց գլխաւոր բալէտմայստէրի պաշտօնից եւ վերադարձաւ Երեւան։

### Կրկին Երեւանում Եւ Ինչուներ

«Գիշեր է։ Լոյն թախիծով քայլում եմ փողոցով։ Զնոան բոլոր ձախորդութիւնները ու տիհանորիւնները մոռացուած եւ անհամբեր սրտով բոնում եմ թատրոնի ճամփան»<sup>22</sup>։

Վերջին մէկուկէս տարում Երեւանում Ասատուրեանը բեմադրեց երեք գործ՝ 1998՝ Տիգրան Չուխաչեանի «Արշակ Երկրորդ» օպերայի պարային տեսարանները (բեմադրիչ՝ Տիգրան Լեւոնեան, 1936-2004) եւ արդէն յիշատակուած «Դիէ Եաման» եղանակով պարը Հայաստանի Պարի Պետական Համոյթում, եւ 1999ին իրականացրեց Լեւոն Շանթի «Հին Աստուածներ» դրամայի բեմադրութեան պլաստիկ-պարային ձեւաւորումը Սունդուկեանի Անուան Դրամատիկական Թատրոնում (բեմադրութեան ռեժիսոր՝ Հայաստանի ժողովրդական արտիստ Վահէ Շահվերդեան, ծն. 1945)։

Այնուամենայնիւ, վերջում նորից անդրադառնանք Աշոտ Ասատուրեանի գործունէութեանը Երեւանի Օպերայի եւ Բալէտի թատրոնում 1973-1990։ Ինչո՞ւ 17 տարում նրան յաջողուեց բեմադրել ընդամէնը 8 բալէտ։ Ինչո՞ւ նա չկարողացաւ ծաւալել ոչ մի կազմակերպչական գործունէութիւն։ Զէ՞ որ նա հանդէս էր եկել որպէս բեղմնաւոր բալէտմայստէր եւ լաւ կազմակերպիչ թէ՝ Սարատովում, թէ՝ Խարկովում, որտեղ նա բացի բեմադրական աշխատանքից բազում անգամ դուրս է բերել ոռուսական եւ ուկրաինական խմբերին հիւրախաղերի։ Այստեղ նա առաջ է քաշել երիտասարդ պարողներին, նախապատրաստել նոր սերունդ։ Եւ Երեւանում անցկացրած տարիներին նա բեմադրեց նաև Հնդկական «Կաջուրահու» երաժշտութեան հիման վրայ ստեղծուած «Հրաժեշտ Արեւելքին» բալէտը Նորայր Մեհրաբեանի (ծն. 1941) «Բարեկամութիւն» համոյթում (1990), բալէտներ Սարատովում («Թեմա Վարիացիաներով» Մոցարտի Լա մաֆոր սոնատի երաժշտութեամբ եւ Մորիս Ռաւէլի «Բոլերօ»ն, 1977), Եկատերինբուրգում եւ Զելիբարինսկում Խաչատրեանի «Գայիանէ»ն, (համապատասխանաբար՝ 1982 եւ 1984ին), Թրիլիսիում (Կոնստանտին Օրբելեանի «Անմահութիւն»ը, իմիջիայլոց առաջին հայ բալէտը, որ բեմադրուեց Փալիաշուիլու Անուան Օպերայի եւ Բալէտի թատրոնում, 1979), Բաքուում

(Նարիման Մամեդովի «Ումայ» աղբրեջանական ազգային բալէտը, 1981), Զէ<sup>1</sup> որ նա Երեւանում բեմադրեց պարեր եւ պլաստիկ տեսարաններ բազում օպերաներում ու Դրամատիկական թատրոնում, ինչպէս նաև մեծ թուով պարային մանրանկարներ, որոնք այդպէս էլ չուցադրուեցին։ Զէ<sup>2</sup> որ նա գրել էր բազմաթիւ պարային բեմադրեր, որոնք մտայդացել էր բեմադրել իր հայրենի բներում։ Ինչո՞ւ նա 1973ին Երեւան հաստատուելուց յետոյ մի քանի տարի ապրում էր բնակարանային դժուարին պայմաններում։

Արդեօ՞ք այս եւ նման բազում հարցերի պատասխանը չէր փնտուում Աշոտ Ասատուրեանը իր վերջին՝ «Սիմֆոնիկ Պարեր» բալէտում։ Արդեօ՞ք չէր դրել հարցադրումը հետեւեալ կերպ։ «Ես եմ դաւաճանում Հայրենիքը, թէ՛ Հայրենիքը՝ ինձ»։ Զէ<sup>3</sup> որ նա վերադարձաւ Հայրենիք արդէն անբուժելի հիւանդ, աշխատեց մինչեւ համարեա կեանքի վերջին օրերը յօդուա Հայրենիքի եւ մահացաւ (1999, Մայիսի 23)<sup>4</sup> վերջապէս յաւերժօրէն կապուելով հայրենի հողին։

## ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Սոյն յօդուածում եւ մօտ ապագայում հրատարակութեան պատրաստուող «Աշոտ Ասատուրեան» մենագրութեան մէջ չէր կարող համակողմանիօրէն բացայալուել Ասատուրեանի կեանքը եւ ստեղծագործութիւնը, եթէ մեզ օգնութիւն ցոյց չտային մի շարք հայ, ռուս, ուկրաինացի արուեստագէտներ։ Այստեղ ցանկանում ենք շնորհական խօսք ասել Աշոտ Ասատուրեանի այրիին՝ Հայաստանի ժողովրդական արտիստուհի Էլիֆրա Մնացականեանին, որ մեզ տրամադրեց Ասատուրեանի ողջ զիւանը՝ նրա բեմադրած բալէտների տեսահոլովակները, բալէտմայստէրի ձեռագիր բեմադրերը եւ ներկայացումների բեմադրմանը վերաբերուող մտարումներ պարունակող բազմաթիւ տետրերը, նաև ներկայացումների թատերական ազդերը եւ ծրագրերը, լուսանկարները եւ այլ նիւթեր։ Աշոտ Ասատուրեանի մանկութեան եւ հասուն շրջանի (մասնաւորապէս երեւանեան գործունէութեան տարիների) մասին տեղեկութիւնները քաղուած են նոյնպէս Էլիֆրա Մնացականեանից եւ նրանց միակ զաւակի՝ Արա Ասատուրեանից մեր զրառած յիշողութիւններից, ինչպէս նաև Հայ թատրոնի մի շարք պարող-պարուհիների, նուազավար՝ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդական արտիստ Եուրի Դաւթեանի, բեմադրիչ Վահէ Շահվերդեանի հետ ունեցած հարցազրոյցներից։ Լենինգրադում, Սարատովում, Խարկովում նրա ուսման տարիների եւ գործունէութեան մասին մեզ գրաւոր յիշողութիւններ են ուղարկել Ասատուրեանի գործընկերներ էռա Բարուտչեւան, Գենադի Ալբերտը, Վալերի Նեստերովը, Իգոր Ստեցկուր-Մովսան, Օլգա Վասիլիանսկայան, Ալեքսանդր Չեպալովը, Նիկոլայ Մարգարեանցը, որոնց նոյնպէս յայտնում ենք մեր երախտագիտութիւնը։

<sup>2</sup> Աստծոյ ցասման օր (լատիներէն)։

<sup>3</sup> «Սիմֆոնիկ Պարեր» բալէտի ծրագիրը եւ բալէտի բովանդակութեան պարզաբանումը առնուած են Աշոտ Ասատուրեանի անձնական փոնդում պահպանուող տետրերից։ Հրապարակում է առաջին անգամ (թարգմանութիւն ռուսերէնից)։

<sup>4</sup> Նիսա Անիսիմովա (1909-1979), Իգոր Բելակի (1925-1999), Նատալիա Կոմկովա (1907-1973)՝ ռուս-խորհրդային բալէտի ականաւոր գործիչներ։

<sup>5</sup> Մագումով հայ Նիկոլայ Մարգարեանցը (ծն. 1928ին) աւարտել է Երեւի Պարարուեստի Ռեսունարանը 1949ին եւ Լենինգրադի Կոնսերվատորիայի Բալէտմայստէրական Բաժինը (Առաջինովի դասարան)։ 1949-1950 եղել է Դոնեցկի Օպերայի եւ Բալէտի թատրոնի մենակատար, 1953-1962՝ մենակատար-պարող Ռեկրանչայի Պարի Համոյթում։ Եղել է Պերմի (1967-1971), Տաշքենդի Նավոյի Անուան (1971-1975), Բաշկորտստանի (1986-1988) օպերայի եւ բալէտի թատրոնների գլխաւոր բալէտմայստէր։

- Կրասնորյարսկի Օպերային թատրոնի բալէտային Խմբի հիմնադիր եւ գլխաւոր բալէտմայստէր (1977-1983), Դասաւանդել է Լենինզրադի Կոնսերվատորիայի բալէտմայստէրական Բաժնում (1975-1977), Բազմաթիւ բալէտների բեմադրիչ է, այդ թւում՝ Արամ Խաչատրեանի «Սպարտակ»ի (Պերմ եւ Ռիֆա), Ռւզբեկստանի եւ Թուրքմենստանի Պետական մրցանակների դափնեկիր: Պատկանում է, ինչպէս եւ Աստուրեանը, 1960-80ի նորարար բալէտմայստէրների սերունդին: Այժմ բնակւում է Սանկտ-Պետերբուրգում:
- <sup>6</sup> Գէորգի Ալեքսիձէ (1941-2008), ականաւոր ռուս-վրացի բալէտմայստէր: Եղել է Աշոտ Ասատուրեանի մաերիմ ընկերը թէ՛ Թրիլիսիում, թէ՛ Լենինզրադում, թէ՛ այլուր:
- <sup>7</sup> Եֆիմ Խմելնիցկին կոնսերվատորիան աւարտելուց յետոյ չի շարունակել իր գործունէութիւնը որպէս բալէտմայստէր: Աւելին յայտնի չէ:
- <sup>8</sup> Տե՛ս՝ Era Barutcheva, Georgi Alexidze – Khareograaf Bojev Milostiyu (Գէորգի Ալեքսիձէ՝ Աստուր ողորմութեամբ բալէտմայստէր), Սանկտ-Պետերբուրգ, 2005, էջ 20:
- <sup>9</sup> Ենուրի Գրիգորովիչ (ծն. 1927), Հանրաճանաչ ռուս բալէտմայստէր: Նրա Արամ Խաչատրեանի «Սպարտակ» բալէտի բեմադրութիւնը հռչակուած է աշխարհով մէկ: 2009ին բեմադրեց «Սպարտակ»ը Հայ Ազգային Օպերայի Եւ Բալէտի թատրոնում:
- <sup>10</sup> Վլադիմիր Վարկովիչը կիրառել է 1953-1955 եղել է Երեւանի Սպենդիարեանի Անուան Օպերայի Եւ Բալէտի թատրոնի գլխաւոր բալէտմայստէր:
- <sup>11</sup> Աշոտ Ասատուրեանի մօտ տասը բեմադրութիւն բարերախտաբար պահպանուել են տեսասկաւուակների վրայ:
- <sup>12</sup> Լենինզրադեան կոնսերվատորիայի բալէտմայստէրական Բաժնում դասաւանդուող առարկաների եւ դասաւանդման մեթոդարանութեան մասին մեզ հանդամանօրէն պատմել է Աշոտ Ասատուրեանի դասընկեր եւ ուսանողական տարիների մօտիկ ընկերը Նիկոլայ Մարգարեանցը (Հարցազրոյց հեռախօսով Սանկտ-Պետերբուրգից Սեպտեմբեր 2009ին):
- <sup>13</sup> «Դրամբալէտ» (քառացիօրէն բալէտ-դրամա) ուղղութիւնը ձեւաւորուել է 1930ականներին որպէս Խորհրդային Միութեան բալէտային հիմնական եւ «միակ ճիշտ» ուղղութիւն: Այդ ուղղութեանը յատկանշական էր դիպաշարի չատ մանրամասն ցուցադրումը ոչ թէ պարի, այլ մանջախաղային շարժումների միջոցով: Իսկ պարում էին միայն այն տեսարաններում, որտեղ «պատշաճ էր» խնջոյք, տօն եւն: 1960ականներից «դրամբալէտը» հետպհատէ սկսեցին հերքել բալէտմայստէր նորարարները, որոնք համարում էին, որ բալէտում ամէն ինչ պէտք է արտայայտուի միայն պարարուեստի խորեոգրաֆիային յատուկ արտայայտչական ձեւերով: Չնայած ժամանակին, 70ականներին, երբ «դրամբալէտը» արդէն գուրս էր եկել բեմադրական փորձից, սկսուեց նրա արժանիքների հերքումը: Այնուամենայնիւ, առարկայական յետադարձ հայեացք գցելով, պէտք է ասել, որ «դրամբալէտը» ունի եւ դրական կողմեր, մասնաւորապէս՝ բալէտային դերասանի արտայայտչականութեան զարգացման առումով: Պէտք է նաև նշել, որ դրամբալէտի ուղղութեան ներքոյ են ստեղծուել Սերգէ Պրոկոֆիևի «Շումէօ եւ Զուլիկաւը», «Քարէ Մաղիկը», «Մոխրուտը», Արամ Խաչատրեանի «Գայիանէ»ն եւ «Սպարտակ»ը եւ այլ կոմպոզիտորների՝ գեղարուեստական մեծարժէք բալէտային երաժշտական երկեր:
- <sup>14</sup> Նինա Միրիմանովա (ծն. 1917), Ռուսաստանի վաստակաւոր արտիստուհի, ծագումով Հայ: 1934ին աւարտել է Լենինզրադի խորագային Տեխնիկումը: 1934-1938՝ եղել է Լենինզրադի Օպերայի եւ Բալէտի Փոքր թատրոնի առաջին մենակատարուէին: Բացի 1961ին հիմնադրուած Լենինզրադի Կոնսերվատորիայի Օպերային Ստուդիայի Բալէտային Խմբից նաև 1983ից եղել է Լէոնիդ Եակորսոնի «Խորեոգրաֆիկ Մանրանկարներ» (Լենինզրադ) մեծ համբաւ վայելող բալէտային խմբի փորձավար:

- <sup>15</sup> Այս տեղեկութիւնները դրանցուած են Մանկա-Պետերբուրգի խորեոգրաֆիայի ամբիոնի յատուեկ «Աշխատանքային Տետր»ում։ Այդտեղից նրանք արտադրել եւ մեզ է ուղարկել Մանկա-Պետերբուրգի Կոնսերվատորիայի Հայազգի պրոֆեսոր Էռա Բարուտչեան, որին կը ցանկանայինք յատուեկ շնորհակարութիւն յայտնել։
- <sup>16</sup> Սոյն յօդուածում Աշոտ Ասատուրեանի մասին բոլոր միջողութիւնները եւ մէջրերումները Հաւաքել ենք մենք Յուլիո-Հոկտեմբեր 2009ին Դրանք հրապարակում են առաջին անգամ (որոշ մասը՝ ոռուսերէնից Հայերէն թարգմանութեամբ)։
- <sup>17</sup> Այն մեզ է ուղարկել վերնագրելով դրանք՝ «Հայ Օրփէոսի Խարկովեան Երգը»։
- <sup>18</sup> «Քնած Գեղեցկուհի» բալէտի երաժշտութեան հեղինակն է Փիոտր Չայկովսկին։
- <sup>19</sup> Մարիուս Պետրիա (1818-1910), ազգութեամբ Փրանսիացի, ոռու հանճարեղ բալէտմարտէր, որի բեմադրութիւնները այժմ էլ կազմում են ոչ միայն ոռու, այլև Համաշխարհային բալէտի խաղացանկի «դասական» համարուղղ կորիզը։
- <sup>20</sup> Ալեքսանդր Գորսկի (1871-1924), ոռու բալէտմայստէր։
- <sup>21</sup> Ալեքսանդր Կաներչտէյն (1933-2007), ուկրաինացի երգահան։
- <sup>22</sup> Աշոտ Ասատուրեան, «Անուշի» Վերջին թեմադրութիւնը, Հայաստանի Հանրապետութիւն, 9.07.1998։

ASHOT ASATURYAN  
(1937-1999)

NAZENIK SARGSYAN  
m\_ag@inbox.ru

Outstanding choreographer Ashot Asatryan is definitely one of those whose works can be termed "not for everyone."

Asatryan was born in Tbilisi in 1937. As a choreographer, he received the best education of his time. He studied in the class of the prominent dancer and choreographer Vakhtang Chabukiani at the Tbilisi Dance School. In 1962 he attended the newly inaugurated Choreography Department of Leningrad (St. Petersburg) Conservatory, where his teacher was Fyodor Lopukhov, groundbreaker in Soviet choreography. Under his tutorship, Asatryan acquired in-depth knowledge of choreography, theory of music and fine arts. He had a good knowledge of classical literature, philosophy and theosophy. After graduating from the Conservatory, Asatryan became the main choreographer of Saratov Opera and Ballet Theater during 1968-1972. He became the choreographer at the Spendiarian Opera and Ballet Theater in Yerevan between 1973 and 1990 and the principal choreographer of Lysenko Opera and Ballet Theater in Kharkiv, Ukraine, between 1991 and 1997.

A prolific choreographer, Ashot Asatryan staged as many as twenty-two ballets in St. Petersburg, Saratov, Sverdlovsk, Yerevan, Tbilisi, Chelyabinsk, Kharkiv, Baku. He co-produced numerous operas and dramas, reproduced a number of the classics of the dance on the stages of Saratov and Kharkiv and created numerous choreographic scenes. He is also the author of dozens of librettos, which have not been staged.

Due to his profound knowledge of music, Asatryan created ballets of "visible" musical intonation and form. He was also a talented artist and was costume designer for many of his productions. He had a perfect sense of light and color and wisely mixed them into his own "light dramaturgy." Asatryan's ballets are peculiar examples of a philosophical paraphrase with multiple meanings, with some of them, particularly, Stravinsky's "Orpheus" and Rakhmaninov's "Symphonic Dances," presenting autobiographic reflections on his thorny life.